ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

Հայաստան, Երևան
«01» 04 2022թ.

Սույն Համագործակցության Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի՝ ի դեմս ռեկտոր Դավիթ Խիթարյանի և «Եվրոպական համալսարան» հիմնադրամի՝ ի դեմս ռեկտոր Հեղինե Բիշարյանի միջև (այսուհետ՝ Կողմեր), երկու հաստատություններում կրթության, հետազոտության, մշակույթի ոլորտներում հարաբերություններ և համագործակցություն հաստատելու նպատակով: Կողմերը կհամագործակցեն փոխադարձության հիման վրա ըստ ստորև ներկայացված հոդվածների:

ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐ

Երկու հաստատությունների համակարգողներն են.

1. «Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ
   Անուն՝ Անժելա Նուշիկյան,
   Պաշտոն՝ Արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտոր
   Էլ. փոստ՝ anzhela.nushikyan@sportedu.am
   Հեռ.՝ +374 10 553310 303
2. «Եվրոպական համալսարան» հիմնադրամ
   Անուն՝ Վահրամ Սողոմոնյան
   Պաշտոն՝ Արտաքին կապերի և միջազգայնացման գծով պրոռեկտոր
   Էլ.փոստ՝ v.soghomonyan@eua.am
   Հեռ՝ +374 11240134

ՀՈԴՎԱԾ 1. Կողմերը պայմանավորվում են զարգացնել փոխադարձ և երկարատև փոխըմբռնում՝ նպատակ ունենալով իրականացնել համատեղ կրթական, մշակութային և գիտական ծրագրեր:

Համագործակցությունը կիրականացվի փոխադարձ հարգանքի հիման վրա, պետք է համահունչ լինի երկու բուհերի ռազմավարությանը և պետք է համապատասխանի երկու կողմերի ներքին կրթական և վարչական կանոնակարգերին:

ՀՈԴՎԱԾ 2. Կողմերը համաձայնում են սահմանել հիմնական համատեղ գործողությունների համալիր, որը կարող է նկարագրվել հետևյալ կերպ.

• Դասավանդման մեթոդների, գիտահետազոտական և ակադեմիական աշխատանքի կատարելագործում,
• Համատեղ կրթական ծրագրերի նախագծում և հետագա զարգացում,
• Համատեղ գիտահետազոտական գիտական նախագծերի և ծրագրերի իրականացում,
• Գիտական և դիդակտիկ նյութերի փոխանակում, համատեղ գիտական աշխատանքի մշակում և հրապարակում,
• Համատեղ միջոցառումների կազմակերպում, ինչպիսիք են սեմինարները, կոնֆերանսները և այլն:

ՀՈԴՎԱԾ 3. Յուրաքանչյուր նախագիծ կամ գործունեություն, որը ճանաչվում է որպես ընդհանուր հետաքրքրություն, կնկարագրվի առանձին Համաձայնագրերով, որոնք կներառեն համագործակցության պայմաններն, Կողմերի պարտականությունները և դրա իրականացման վարչական և ֆինանսական մանրամասները:

ՀՈԴՎԱԾ 4. Առանձին Համաձայնագրերով համաձայնեցված յուրաքանչյուր ծրագիր կամ գործունեություն կֆինանսավորվի անհատապես՝ ըստ առկա ռեսուրսների: Նման նախագծերի կամ գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները կբանակցվեն համապատասխան ֆինանսավորող գործակալությունների հետ ծրագրի համակարգողների կողմից՝ երկու Կողմերի աջակցությամբ: Ինչպես նաև կախված առկա ռեսուրսներից, Կողմերը կմշակեն ծրագրեր՝ իրենց սեփական ֆինանսական միջոցներով:

ՀՈԴՎԱԾ 5. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում հինգ (5) տարի ժամկետով, յուրաքանչյուր կողմ կարող է խզել հուշագիրը, այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

ՀՈԴՎԱԾ 6. Սույն Հուշագրի կատարման արդյունքում առաջացած ցանկացած տարաձայնություն, շահերի բախում կամ խնդիր կլուծվի անմիջական և բարեկամական խորհրդակցության միջոցով:

Սույն Հուշագիրը ստորագրված է հայերենով և երկու (2) օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

.....	.....
Ռեկտոր Դավիթ Խիթարյան	Ռեկտոր Հեղինե Բիշարյան
«Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Եվրոպական համալսարան» հիմնադրամ
Ք. Երևան, Ալ. Մանուկյան 11	Ք. Երևան, Դ. Անհաղթ 10